




"ԱՁԳ., ԳՐԱԿԱՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԵՐԿՐՈՇԱՅ ԱՆԿՆԻ ՀԱՅԱԹԵՐԹ

لبنان * جريدة ارمنية - صباحية * اديبة اقتصادية وحرة

Str. de Sborak
Ժ. ԱճԵՄԵԱՆ
Խմբագրապետ
ԲՐՈՅ. Ս. ԹՈՒՄԱՃԱՆ
Վարիչ - Խմբագիր
Յ. ՊԱՆԵԱՆ

«LIPANAN»
JOURNAL ARMÉNIEN
POLITIQUE LITTÉRAIRE
Place des canons
BEYROUTH LIBAN
DIRECTEUR-PROPRIÉTAIRE
J. ADJEMIAN

ՀԱՐԱԹ
5
ՅՈՒԼԻՍ
1930

ԲՈՒԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՍՈՒՐԻԱ ար. 350 Ս Դ
ՎԵՑԱՍԵԱՅ 200 »
ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ ար. 6 Տօլա
ՎԵՑԱՍԵԱՅ 4 »
Հասցե . Բլաժ Տէ Գաճօն
ՊէճՐՈՒԹ - Լիբանոն

2. ՏԱՐԻ ԹԻԻ 473

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎԱՆԻ ԶԻՆՈՒՄԻ ԵՒ ՀԱՐԱԹ ՕՐԵՐ

ԵՆՈՒՅ 3 Ս. ԴԱՆԵԱՆ

ՆՈՒՊԱՐԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

Որքան կը յիշեմ շատ տարիներ առաջ, երբ մեռաւ Եփրատի երկար ժամանակեայ վարչապետը՝ Նուպար Փաշա Նուպար, «Թայմը» անգլիական կառավարութեան կիսամյա տնօրէնութիւնը, յօդուածաշարքով մը որ տաւն է հինգ օր տեւեց. նկարագրեց այդ մեծ ու դիւանագէտ մարդուն կենսա-դրականը եւ կատարած գործերը եւ կարակացութիւնը լայնով ըսաւ թէ «Ահա ինչպէս անգլիացի դիւանագէտներու մեծագոյններէն մինն ալ»։ Թէ Նուպար ինչ կը պարտի Նուպար Փաշայի եւ անիկայ գեռ իշխանութեան չելած Եփրատի գործերը ինչ վիճակի մէջ կը գտնուէին, միեւնոյն ա-տեն Անգլիական Արտաքին քաղաքականութեան մէջ որքան օգտակար եւ օժանդակ գտնուեցաւ, կարելի է պատկերացուած տեսնել այդ պատմական էջերուն մէջ։ Մենք ատիկա թղթատելու միտք չունինք, անցեալին կը վե-րաբերի այլեւս, միայն կանկ պիտի առնենք կէտի մը վրայ որ Հայ Ազ-գային տարեգրութեանց կը վերաբերի. եւ որը ցոյց պիտի ան թէ Նուպար-եան լնտանիքը ինչ չափով գեր ունեցաւ Հայ ազգային Գաղաքականու-թեան տեսակետով, եւ եթէ Ազգովին կարենայինք ըմբռնել ժամանակին Նուպար Փաշայի մեծութեան չափը եւ մտիկ ընէինք անոր, այսօր Ազգին ճակատագիրը ինչ հանգամանք ստացած կրնար ըլլալ։

Ժամանակին Բարթոլոմէոս Սրբապետ Չամբեան մը կար, Ապտուլ Հա-միտի օրերուն, Պատրիարք Սրմանեան սրբազանի նախորդը իբր Պատրիարք-ական տեղապահ, այս մարդը Պօլսի Նշան թաշի իր բնակարանին մէջ ինչ պատմած է հետեւեալը։ Որքան ստոյգ է չեմ գիտեր, միայն ուրիշ աղ-բիւրներէ ալ լուծ եմ եւ հաւանական գտնելով իր շահեկանութեան համար կը գնեմ հոս։

Ազատական եւ Յեղափոխական գաղափարները դեռ նոր կը ծլէին հա-յոց մէջ եւ Հնչակեան կուսակցութեան մը հիմերը զրուելու վրայ էին 1880 թուականներուն ասկէ կէս դար առաջ։ Նազար Բէկ, Մարօ, Խան-Ազատ Արտասահմանի մէջ խմորը պատրաստած եւ «Հնչակ» թերթի մ'ալ հրատարակման ժամանակամիջոցին կը զուգադիպի, Ներոն Պատրիարք վարժապետեանի օրերուն 1884 Հոկ. 28ին վախճանած։

Պատրիարքարանի մէջ Արքիար Արքիարեան, ինտենտան թուականներուն «Հայրենիք» օրաթերթի խմբագրապետ՝ Յովհ. Շահնազարի նման երիտա-սարդ եւ վառվռուն ուժեր, թրքական գաւառներու մէջ կազմակերպու-թեան մը հիմը դնել եւ մասնաճիւղեր ստեղծելու վրայ կը խորհէին։ Այդ օրեր արթնէ թուրքիա 1877 ի Ռուս - Թրքական պատերազմէն պար-տեալ դուրս եկած, տկար եւ անգամատեալ վիճակի մէջ կը գտնուէր։ Ներ-սէս Պատրիարք այս ամէնը նկատի ունենալով եւ գիտնալով թէ Եփրատի վարչապետութեան վրայ կը գտնուի աշխարհի մեծագոյն դիւանագէտներէ մին, եւ ատիկա ալ հայ մ'է Նուպար Մեծը. կուզէ անոր կարծիքը առնել Հայ Յեղափոխութեան մը հնարաւորութեան վրայ։ առ այս կը գրէ նամակ մը Նուպար Փաշայի եւ ստացած պատասխանը հետեւեալը կը-լայ։

« Հայերը ոչ մի տեղ մեծամասնութիւն չեն կազմեր թուրքիոյ մէջ, Այլազան ժողովրդոց մէջ ցրուելուած են. ասիկա առաջին պատճառն էր-կըրորդ, սահմանային առումով պաշարուած են անանկ ուժերէ որոնք ան-կախ Հայաստանի մը կազմութեան խոչնդոտ կրնան ըլլալ։ Ասկէ վատ աշ-խարհագրական, տեղագրական, քարտիսային եւ ցեղաբանական տեսակէտ-ներով եւ ինքս անկարելի կը գտնեմ անկախ ու զուտ Հայաստանի մը կա-ռնալ առաջ քալը եւ հետեւաբար յեզափոխական ձեռնարկներու հակա-ռակ եմ ես։ Պէտք է ուժ տալ կրթական ճիւղին եւ ժողովրդեան լուսա-ւորութեան, եւ ժամանակի հոլովումով հասկացողութեան գալ թուրք տար-րին հետ եւ բարենորոգման աշխատել երկիրը ամբողջութեամբ։ Յեղափո-խութիւնը վտանքի եւ ինքնասպանութեան կրնայ առաջնորդել համօրէն ժո-ղովուրդը»։

Կատարելապէս չեմ կրնար երաշխաւորել ինչպէս ըսի վերի գրուածնե-րու նշանակութիւնը, իսկ եթէ ստույգ է եւ ես կը հաւատամ, հոտ է Նուպար-եան գերզատանի հոյակապ պետին ամենամեծ արժանիքը։ Առողջ եւ հե-ռաւոր դիւանագէտի գաղափար։ Ինչքան տառամարիք, իր մարգարէու-թեանց կատարումին հանդիսատեսը եղանք ամբողջ ազգով մը։

Ուրեմն ես նախ կը խոնարհիմ այդ մեծ մարդուն շիրմին առջեւ եւ կը-սեմ. «Թաւիտեան ապրի հայոց մեծ մարդուն եւ Միջազգային դիւանագէ-տին Նուպար Փաշա Նուպարի անունը եւ անմահ թող մնայ իր յիշատակը»։ Իր գաւազը Պօղոս Փաշա Նուպար, չունեցաւ իր հօր նման դիւանագի-տական ասպարէզ։ Սակայն հողագործական նոր գիտի եւ մէթոտներու ե-գիպտոս ներմուծումով, գործածումով, Եփրատի հողամշակութեան եւ արդիւնաբերութեան մեծ դարի տուաւ, եւ յարգուեցաւ ամենէն։ Այդ մեզ չվերաբերի բնականաբար եւ հայ մարդի վրայ է որ կուզենք տեսնել զինք քաղաքական գործունէութեան վրայ բան չունինք գրելիք, ամենուն գիտ-ցածն է եւ գեռ նոր։ Միայն Պօղոս Նուպարի յայտարար նշանը եղող մէկ բանի վրայ շեշտ դնելով վերջ պիտի տանք մեր խօսքին։

Ժամանակակից պատմութեան մէջ Հայ հայ մը, որը քսակը բանայ ու տայ առատօրէն եւ հաւասարի Պօղոս Նուպարի։ Անիկա Հասաւ, Եփր, որ որ բարենպաստ կ'ուզ ու գործ մը տեսաւ։ Ասոնց վրայ բարեցէք Նուպար-աշէնի եւ Հ. Բ. Ը. Միւսթեան հիմնադրի հանգամանքը եւ կուենեաք Նուպար, Նուքար Փաշայի արժանուոր. Շառաւիղը Պօղոս Փաշա Նու-պարը։

Այս քանը կը բաւէ կալ ծինք իր յաջորդներուն յիշեցնելու համար թէ Ազգը իր երախտապարտութիւնը յայտնելու մէջ թերի բան չթողուր, հա-մազգային սուգն է որ կը տիրէ այսօր խափու աշխարհի ուր որ հայ մը կայ միայն կապառէ դարձեալ իր գաւազէն Սուքէլ Պէյէ եւ աղջիկէն Տիկին Նոյնմի Գափամաճեան է, չ'մոռնալ թէ իրենք զոյգ Նուպարներէ կը սերին եւ Ազգը կը փափաքի օր մը տեսնել զիրենք ալ այս փառքին եւ յիշատա-կութեան արժանացած։

Բրոք. Ս. ԹՈՒՄԱՃԱՆ

Թուրք Հանրապետութիւնը եւ Թուրքիայի

Հայկազ գտնուած միջոցի «Եփ-րատ» թերթի թիւերէն միոյն մէջ Պօլսահայերը չօջափող յօդուած մը տուած է որը խմբագրական դիտու-ղութեան տեղի տուած էր. նախ սա չեմ թէ թուրքիոյ նկատմամբ զրիչ շարժողները առաջին անգամ նկատի պէտք է առնեն սա պալապան։ Մանաւանդ մեր հայերը։ Այսօր թուրքիոյ մէջ կայ հոյակապ եւ ար-դիական կառավարութիւն մը, որը իր ըրածն ալ գիտէ դրածն ալ, գուրտի գրուածներ մազի չափ ազ-գեցութիւն չեն կրնար բանեցնել իր վրայ, եւ ասիկա անկողմնակալ եւ-րոպացի այցելողներ եկած պլուրտած են թուրքիա եւ արտասահման եր-թալով գնահատանքով արձանագը-րած։

Ինչ կեղծ չ'գիտցած բաներու վրայ երեւակայական կարծիք յայտ-նել չենք գիտեր։ Ըսինք ու կը կրկնենք, այսօր թուրքիոյ մէջ նա-խորդ ըժշտիներու նշուլը իսկ չէ մը-նացած։ Դատարաններ արդարու-թեան վրայ հաստատուած են, դա-տեր, վճիռ կատանաւ բառաբոլում-ներով. կողմնակցութիւն ճնշում չի-կայ։ Կը պատահի կաշառակերու-թեան զէպքեր։ որոնք եթէ գիտ-ցուին սաստիկ պատժոյ ենթակա չեն, օրինակ նախորդ ծովային գոր-ծավար Իսսան եւ Այնթապի մէջուս Ալի ձեռնարի պէջի պարագաները։

Հայերը ոչ մէկ հակառակութեան ենթակայ են, կը բաւէ որ անկեղծ հպատակ գտնուին հանրապետու-թեան գրութեան եւ չունուցանեն իրենց մէջ արտասահմանեան թու-նաւոր դադափար։ Դպրոցներ մէա-րիֆէ գծուած որոշ ծրագրի մը վրայ կը զեկավարուին եւ այդ ալ ընդ-հանուրի յատուկ է։ Հայոց համար մասնակի բան չկայ։ Կը մնայ միակ բանը որ կրնայ առաջ բերել, ու-րեմն ինչո՞ւ հայոց համար երթեւե-կը ազատ չէ թուրքիոյ մէջ. ասոր ալ կըսենք թէ անոնք որ տեղէ մը տեղ գործ ունին հրաման առնելով կրնան երթալ եւ կարգադրել զոր-ծերին, իսկ անարգել ճամբորդու-ղութիւնը գեր կանուխ է կարծեմ, եւ իմ գատումով Պօլսահայեր ալ ան-

ճարակ են, մինչեւ հիմա չեն կրցած հասկնել իսմիթ վաշայի պէս լու-սամիտ վարչապետի մը նախագա-հած զահլիճին թէ իրենք քաղաքա-կան որեւէ ակնկալութենէ զուրկ են թուրքի մը չափ թուրք եւ հաւա-տարի մ են տրուող օրինաց։ Ասիկա ընելու համար մարդ կուզէ եւ այդ ալ չ'կայ, իմ տեսութեամբ կառա-վարութիւնը ինք պիտի տեսնէ օր մը բուն հոգեբանութիւնը հայոց եւ պի տի տայ արտօնութիւն ազատ կեր-պով ուր որ ուզեն երթալու։ Ու-րիշ սեղմումներ ալ եթէ կան աստի-ճանաբար պիտի վերնան։ Արդի ի ո-ր քիոյ վարիչներուն մէջ կայ բարե-նորոգչական մաս մը որը ճարտը յիշեցնել կուտայ ինչ։ Անոնք երգու-ած են զինկ պիտութիւնը քաղա-քակիրթ ազգաց շարքին մէջ ե պիտի յաջողին ի վերջոյ, եւ պէտք է նը-կատել որ քաղաքակիրթ ազգեր եր-թէք տարբերութիւն չեն զներ ի-րենց հոգատակներու միջեւ ինչ կրո-նի եւ ազգի ալ պատկանին անոնք։

Ամենակարեւոր մէկ խնդիր կայ որը պէտք է նկատի առնեն մեր ար-տասահմանեան երեւակապաշտնե-րը։ Յորչափ ցնորքներու ետեւէ պը տըտին, ցորչափ ժողողողեան սը-գիտութենէն օգտուելով, նախապա-տերազմեան երազները ոնուցանեն եւ ցորչափ չ'մոռնեն իրական կացու-թիւնը եւ թրքահայած քաղաքակա-նութեան վերջ տան, թող չսպա-սեն որ թուրք կառավարութիւնը կատարեալ անկեղծ աչքով նայի հայոց վրայ։ Եւ ասիկա շատ բնա-կան է. թուրք սպագրական տեսչու-թիւնը կալ ող մալ ող ձեռք կը գտ-նուի, ասոնք ամէն օր կառնեն ար-տասահմանի հայ օրաթերթիցը պար բերաթերթերը, կը բանան էջերը որ առտուն կանուխ ելլող քաղա-քագէտ կուտ թուրքիոյ հասցէին հայհոյութիւն չմիար որ չթափեն, սպառնալիք հողար տեսակները եւ զրպարտութիւն կը կարգան ստոյգ կը ծիծաղին եւ ինչ կըսեն մտքե-րուն զիտէք այս իմաստակներուն խելքը շատոնց թուած օդը գացած է. ոչ խօսածնին գիտեն եւ ոչ ալ (. Բ. Լ. Ս. Բ. Բ. Բ.)

ԱՄԱՎԵՐՁԻ ՄԱՍԻՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ

Դպրոց. Հանդեսներ Փրանս. Տեղեկագիր Հոգ. Յաննախոսութիւն

ՅՈՒՆՈ - ԹՈՒՐԲ

Համաձայնագիր ԱՂՄԱՍԼԻՑ ՆԻՍՏ

29 Յունիս կիրակի օր հանդէսներու օրն էր: Մին կատարուեցաւ հայոց Ս. Նշան եկեղեցւոյ բակին մէջ խուռներամ բազմութեան մը ներկայութեամբ: Իսկ ուրիշ մալ հայ կաթողիկոսականութեան վերաբերող որը առանձին պիտի նկարագրուինք:

Նախ կանգնեց հայոցը, Ս. Նշան Ազգ. երկսեռ վարժարան:

Հանդէսը կը վարէր Տնօրէն Պ. Վ. Գէորգեան. եղան յաջող արտասանութիւններով Հայ Փրանս. ու Արար լեզուներով: Երգուեցան մի քանի երգ և նուազ ջութակի և դաշնակի ընկերակցութեամբ, և ասանց ամէնէն յետոյ վկայականաց բաշխման առթիւ Պ. Տնօրէնի հուսք բանքով ու առաջնորդի պահպանելով հանգէսին վերջ տրուեցաւ:

Այս առթիւ մեր գիտողութիւնները հետեւեալներն են:

Նախ կարգադիր մասնախումբը պէտք էր ապահոված ըլլար ըստ բաւականի նստարաններ. ժամերով ահապէն բազմութիւն մը ստիք վրայ չթողելու համար: Պարագ է առարկել թէ «աշոտ, նստարան. չունինք» տարին մէկ անգամ կատարուող այսպիսի մէկ հանգէսի առթիւ զօրօքն ալ կրնար հայթայթուիլ: այս անցներնք, աւելի կարեւորը կայ:

Բեմի ճիշդ ճակատը հոգաւոր զբօսակ մը կար վրան «Հ. Ա. Վարժարան» վերադասութեամբ որուն վերջին ան կամ այլը յետագարծ տեսանք մենք: Ասիկա որքան գիտենք ներկայ Հայաստանի իրաւակարգի ու հակառակ է և կը վերաբերի նախկին հանրապետական մէկ Բէթիմի ուրը գոյութիւն չունի հիմայ և Հայաստանի կամ հայ ժողովրդեան խորհրդանիշը չ'կազմեր: Գաղափարներու ազատութեան ջատագովք ենք մենք: Գուցէ գտնուին սմանք որոնք չ'են կրնար հաշտուիլ ներկայ գոյակիւնով և կը ձգտին աւելի հեռաւոր նպատակի: Ազատ են իրենց կարծեաց մէջ. ըսելիք չունինք սակայն զբօս մը որ միայն հոսանք մը կը շահագրգռէ չ'կրնար ցուցադրուիլ ընդհանրութեան վերաբերող հանգիստավայրի մը ճակատը, և մենք այդ գրօշակը հոտ վետեղողները այնչափ յոնցատու չենք գտներ: Ո՛ւր է Առաջնորդը, ո՞վ կայ առաջնորդարանի մէջ, Ազգին գործերը վարող: Կը հարցնենք իրենց գիտակ են ինչ որ կրնան:

Երկրորդ մի գիտողութիւն:

Հանգէսը կը բացուի երգով մը «Մեր Հայրենիք թշուառ անտէր» յառաջարկով և դադար ընդ մէջ կը կրկնուի ուրիշ երգ մը միեւնոյն իմաստը ցոյց տուող: Քննադատելիք է մեր միտքը, իր կարգին գաղափարային տեսակէտով պիտի գանք ասանց, սակայն համազգային հանգէսի մը «Դաշնակցական» գոյն տալ նախ այդ կուսակցական հետադիւրած քաղաքականութեան տէր սակէտով իրենց օգտակար չ'կրնար ըլլալ, և երկրորդը ազգի մը մեծագոյն հատուկան հայ ներկայ հայաստանի կողմնակից եղած այդ եկեղեցին և հանգէսը անոր պատկանած տեղը փոքրամասնութեան մը խորհրդանիշը վետեղել և հանգէսին այդ գոյնը տալ շիտակ չ'երևիր մեզ:

Ըրածին, ասկէ զատ անարգական բառ մալ կուսակցական միայն որը գրական էջերու չ'յարմարիր և չ'եմ գործածիր: Վերջին խօսք, թրքահայութեան դերը շատանց բարեւոնած կրկար էթէ մի քիչ խելք և առաջադրութիւն ունեցած ըլլալ մեր քաղաքական իրաւունքները:

Ինչպէս մեր ընթերցողները կը յիշեն: Սիւրիոյ և Լիբանանի Բ. Գոմիէր Պրն. Բոնսօ Ֆրանսոս մեկնած էր արձակուրդով ու միանգամայն յոյժ կարեւոր միտքերով մը որ էր հոգաւորեալ երկրի մը մասին սակայն եղած յայտարարութիւններն որոնց վրայ հիմնուելով իմքագրուած Ազգ. Դաշնակցութեան հոգաւորութեանց յանձնաժողովին ներկայացուած է անցեալ ամսոյ 25ին Սիւրիոյ և Լիբանանի 1929 տարւոյ տեղեկագիրը:

Տեղեկագիրը կը պարզէ նախ Սուրիական սահմանադրի կախակայման իրազար ընդունելութիւնը: Մանրամասնօրէն կը բացատրէ 11 Օգոստոսի յայտարարագիրը և 31 Հոկտեմբերի, ազգայնապետ Հաշիմ էլ Աթաթիի նամակը յայտնելով թէ ազգայնականներ չ'ափաւոր միջոցներով կը ձգտին հոգաւորութիւնը դնել Ազգ. Դաշնակցութեան դաշնագրի անհամապատասխան դրութեան մէջ:

Փրանսոս հոգաւորութեան դաշնագրի գործադիրը ըլլալով հագերձ, հակառակ է Սիւրիոյ հետ ստորագրուելու ևնչօր-իրագեան դաշնագրի մը լայն չ'ընդունելով տալ որ ազգայնականներ վտանգեն հոգաւորութեան դաշնագիրը:

Տեղեկագիրը կը յիշէ հակախորհրդարանային հոսանք մը ստեղծելու համար կուսակցութեանց կատարած լուրջ ջանքերը, միապետականներու Յունիս 22ին ազգային միութիւն մը կազմելու աշխատանքի ինչպէս նաև ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂՄԱՍԼԻՑԻ Ժողովին հիման վրայ սահմանադրական ծրագիր և միութիւն ունենալու ձգտումը: Երբ ազգայնականներու միութիւնը Սիւրիոյ բոլոր կեդրոններու մէջ տարածուած է շնորհիւ եռանդուն բարձրանալի մը:

Այս պայմաններն են որ ստեղծեցին Սիւրիական սահմանադրութեան հոջակումը:

Տեղեկագիրը կը յիշէ նաև թէ Պալեստինի ազգային միջոցներ Սիւրիական հանրային կարծիքը նպաստաւոր էր հակախորհրդականներու համար և սակայն սահմանադրութիւն վրայ ձեռք առնուած միջոցներով կարելի եղած է Սիւրիական կամ Տրիւզ կամաւորներու շարժման առաջին առնել ինչ որ Բրիտանական կառավարութեան կողմէ քանիցս արժանացած է շնորհակալութեան:

Ազգայնադրութիւն ինքնավար սահմազը ազակեղորոնացումը վարչական ուղղութիւն մը պահել ջանացած է իր Սիւրիոյ հետ միութիւնը պահելով հանգերձ: Սահմանադրութիւն Անգարայի համաձայնագիրը ինչպէս Ազգայնադրութիւն նոյնպէս շահագրգռող միւս կառավարութեանց կողմէ ընդունուած է ոչորով: 1929 շրջանին ճէպէլ Տրիւզ եղած է խաղաղ, ունեցած է տնտեսական բարձրացում անտարբեր մնալով Պալեստինեան խռովութեանց հանգէպ և 89 ըմբոստներու յանձնուածով նուազեցուցած դժգոհներու թիւը որոնցմէ ոմանք Նէպէք և ուրիշներ Սուրիան Աթաթիի հետ Հատիթ մեկնած են:

Լիբանանի մէջ վերջնաւորուած է հանր. նախագահ Պրն. Շարլ Տէպպաս: Սահմանադրութիւնը մասամբ վերաքննուած է, Մայիսի նախարարական տաղնապին յաջորդած է դահլիճի փոփոխութիւնը. տեղի ունեցած է Սեպտեմբերի տաղնապը և գործադրուած է իր էտուէի ծրագիրը, հոս ալ ինչպէս հոյատարեալ միւս երկրներու մէջ, անդորրութիւնը տիրած էր բացի Տան ռաշներու աւազակայն շարժումէն որոնցմէ 200

հոգի հեռացուած են Եփրատի գետեզերեայ շրջանը:

Տեղեկագիրի երկրորդ մասին մէջ բացատրուած է հոգաւորեալ երկրներու արտաքին քաղաքականութիւնը, այս մարզին մէջ են Թուրքիոյ հետ գոյութիւն ունեցող սահմանագլուխի, սահմանադժուովի և անոնց ապահովութեան խնդիրները որոնք լուծուած են ու կատարեալ հաւատարմութեամբ կը գործադրուին վերջ տալով հրապարակայն շարժումներու:

Մաքսալին սակերու և թրքական հողը լքող Սիւրիացիներու և Լիբանանցիներու լքեալ գոյքերու մասին:

Անգարայի և հոգաւորեալ տէրութեանց միջև գոյութիւն ունի համաձայնութիւն:

Մաքսալին համաձայնութիւն մ'ալ կը լքուած է Պալեստինի հետ տեղաւարտագրութեանց ազատ փոխանակութիւնը:

Հոգաւորեալ երկրները Անգարայի գանանի և Իլազի հետ պիտի կարգադրեն վրանառակ ցեղերու հետ գոյութիւն ունեցող վեճերը:

Հոգաւորեալ երկրները Եգիպտոսի հետ ալ ունեցած և յարաբերութիւններ որոնց կարգէն են 1928 Վաճառականական համաձայնութիւնը և 1929 Փետրուար ամսոյ օրէնքը: որոնք մեծ յուզում պատճառած են սակայն եգիպտական կառավարութեան կողմէ տրուած բարեկամական պատասխանին վրայ մտքերը հանդարտած են:

Տեղեկագիրի ամբողջութեանէն կարելի է եզրակացնել թէ քաղաքական գալուստ վեճակ մը կը տիրէ հոգաւորեալ երկրներու մէջ որոնց արտաքին յարաբերութիւնները կանոնաւորուած են և շիտի նպաստեն երկրի տնտեսական և այլ մարզերու մէջ յառաջդիմութիւն:

X

ՀԱՆՃԱՐ

Մուսթաֆա Բէմալի համար Թուրք նշանաւոր խորհող և անկախ միտք եւանայ Գէմալ Պէյի մէկ գրուածքն է:

Պատմութեան արձանագրւած վեճերական որ մէկ հանճարն ալ եղած ըլլայ հոգ չէ. Անաֆարթայի յաղթանակը յաւետեակային փառք կրնար վաստկեն իրեն:

Միւնչիկ Թուրքիան փրկող մեծագոյն մարդուն համար անիկա միայն փառքի սկզբնաւորութիւն մը կը կազմէ:

Ահ ըլլայի ես ես, Սէր եւ հաւատարմութիւն բնական ըլլալ հասկըցնելու կարող ըլլայի:

Աշխարհի մէջ շաբաթ տգիտութեան կազ ու կուրի վերջ տալու կարող ըլլայի:

Ինչ ըսեմ չեմ գիտեր խաղաղութեան համար միջիտա մալ ունենայի կուտայի:

Ափսոս սակայն, համայն մարդկութիւնը էականը մոռցած դէպի իրութիւն կը նայի:

Երբէ Կէլէզ, ձայնք ալ կը հատնի երգը ալ, ուսիք ալ եւ արմը դռնալ:

Մտիկ ընդուն ո՞վ է, եթէ ինձ կը նայիս հրաժեշտ տուր ամէն բանի եւ կը բաւէ ալ:

Քեզ միացեր է, խելք ու խիղճ չունեցողին շարունակ ելլել խրատ տալ:

Ձէ աշխարհը, քաշուէ անցաւ եւ բնաւ մի ֆիւրէիւր անգամ մը:

Անցեալ ամսոյ 25 ին Յունական Խորհուրդարանը ազմակից նիստ մը ունեցաւ Յունո - Թուրք համաձայնագիրի վաւերացման առթիւ:

Գաղթականաց երեսփոխան Ջիմատէ Սալու յայտարարեց թէ Դաշնագիրը բոլորովին կը փաստէ գաղթականներու կալուածներուն որոնք ոչ թէ 40 մ.լ. 100 մ.լ. 40 մ.լ. իսկ կարծես. թէ իր գաղթականները իրենց իրաւունքը պաշտպանելու օյժ ունին:

Պրն. Վէնիզէլոս ազգարարեց իստաունել իր խօսքը, բազմաթիւ երեսփոխաններէ ձայնակցեցան անոր պառաւով «Անկցի», «Անկցի» որու վրայ միւս գաղթականական Երեսփոխաններ հաւանեցան քուէարկել ինչպստս համաձայնագրի, մինչ հարկը հազարաւոր հետաքրքիրներ, մեծ մասամբ գաղթականներ, ազմուկ կը յարուցանէին, շնորհալով ձախողեցնել համաձայնագրի վաւերացումը:

Ջանադան կուսակցութեանց պետերու յայտնեցին թէ առանց լրացուցիչ տեղեկութիւններու չեն կրնար վճիռ տալ համաձայնագրի մասին:

ՎԵՆԵԶԵԼՈՍԻ ԶԱՅՐՈՅԹՆ ՈՒ Վ Ճ Ի Ռ Ը

Վէնիզէլոս շատ զայրացած պետու վարանսւմէն, Մամուլի ներկայացուցիչներուն յայտարարեց թէ իր կուսակցութեան պատկանող եւ համաձայնագրի դէմ աննպաստ քուէ տուող երեսփոխաններ պիտի նկատուին հրաժարեցուած կուսակցութեան:

ԹԵՎՅԻԳ ՐԻԻՇՏԻ ՊԵՏ ԵՒ ՅՈՒՆԱԿՆԸ ԼԲԵԱԼ ԳՈՅԲԵՐ

Անգարայի Արտ. Գործաւար Թէվֆիկ Րիւշտի պէ: Յունաստանի թրքական զեպանին յայտնեց թէ համաձայնագրի վաւերացումէն վերջ Թուրք կառավարութիւնը Յոյներու Պօլսոյ մէջ ունեցած զբաւեալ (Հաճող եղած) կալուածները պիտի վերադարձնէ իրենց տէրերուն իսկ յուսական կառավարութեան, վաւերացումէն մէկ ամիս վերջ գանձուելիք առաջին գումարը 425,000 ըսթլիք. պիտի բաժնուի Պօլսոյ մէջ հաստատուած ու Անատոլիոյ մէջ կալուածներ ունեցող յոյներուն եւ Արեւմ. Թրակիոյ սահմանէն դուրս հաստատուած կալուածատէր Թուրքերու:

ԻՏԱԼԱՅԻ ՍՊԱՅ ՍԸ ՍՊԱՆՆՈՒԱՏ ԹԻՐԱՆԱՅԻ ՄԵՋ

Յունիս 26ին Ժիսուսէփ Շիէսթի անուն իտալացի սպան, որ պապական բանակի մարզիչ էր, հեծելանիւով պտտած ատին անծռնութիւն կողմէ զնգապահար եղած ու իսկոյն մեռած է:

ՍԲԻԹԱՐԻ ՍԻՐՈՓՕ ՊՈՂՈՏԱՅԻ ՎՐԱՅ

Օր ցերեկով կատարուած այս ուճիւրը իտալիոյ և Ալպանիոյ դահլիճներուն մէջ խնդրոյ առարկայ եղած է: Մարմինը պատերազմական նաւով մը փոխադրուած է իտալիա: Կը կարծուի թէ Կոստանիանուն ալպանացի զինուոր մ'է ոճրագործը, Թրանայի զինուորական դատարանի նախագահը: Տեղոյն վրայ քննութիւն մը կատարած է:

ԱՌԱՏ ԲԵՐԲ ՌՈՒՄԱՆՈՅ ՄԵՋ

Երկրագործ նախարարի յայտարարութեան համաձայն Բուխարէի ներկայ տարւոյ բերքը անցեալ տարւանին կրկնապատկել եղած է հակառակ Տօպրուճա գաւառի մէջ մասնաւորապէս պատճառած ձմարին:

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ ՈՒՐ Ե

ՌԵԺԻՏԻ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ

Իր հաշուեյարդարէն գերջ, 1927 թի վարչութիւնը սկսած է, հակառակ իր յանձնառութեան, կրճատել իր հատուցումները կամ հանգստեան քուէակները իր հին եւ նոր աշխատողներուն, որոնցմէ թրիփօլի Ռէժիտի Տնօրէն Պրն. Ժօլէֆ Սեման, քառասուն տարուան վաստակաւոր ու հանգստեան կոչուած պաշտօնեայ, փոխանակ 40 ի 6 տարուան հատուցումի իրաւունք ստացած ըլլալով, զինմա է արտարութեան եւ շահած է դատը:

Այս արդար վճիռը հանրային կարծիքը ոգեւորած է հետեւաբար 1927 թի պարտաւոր պիտի ըլլայ կարգադրելու իր անձնաւորած հատուցումները:

ՄԻԱՌՈՏԻ ՊԱՏԵՐԱԶՄ ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷԶ

Պանտրօյի գրութեան գործադրութեամբ ոչ միայն ծխախոտներու այլ Լիբանանի եւ Սուրիոյ կառավարութեանց համար ստեղծուած է տեսակ մը կաշուութիւն որ պատերազմի ընդմիջումն է: Ասոր պատճառը այն է որ հակառակ կատարուած դիմումներու Սուրիոյ կառավարութիւնը պահանջուած պանտրօյները չէ տուած Լիբանանի որ այս պատճառաւ չի կրնար իր բերքը ներածել ի Սուրիա այս պարագան ծնունդ տուած է մաքսաներդութեան, Ալէքսանտրէթի անկախ Սանճագի պանտրօյով նոյն Սանճագը զրկուած Լիբանանեան սիկարէթի տուփեր, ճամբան գրաւուած են Սուրիական Իշխանութեանց կողմէ: Ասոր վրայ գործարանատէրները ըսողքած են իսկ Սուրիոյ Երեւմտական Նախարարը յայտարարած է թէ Սուրիական պանտրօյ չկողով ամէն սիկարէթ պիտի նկատուի հակաօրինական, սիկարէթներ պիտի գրաւուին, իսկ տէրերը պիտի յանձնուին արդարութեան:

Լիբանանցի գործալանատէրներ մի քանի օր առաջ ներկայացան վարչապետ Ատիպ Փաշայի ու պարզեցին կայունութիւնը, վարչապետը խոտաւած է խնդիրը յանձնել Բ. Գոմիսիոյ նկատաւման:

ՍԱՔԱՍԱՆ 1927 Ի ՇՐԳԵԶԸ ԱՐԴԱՐ. ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌՋԵՒ

1927 ի Մարտի 23 ին տեղի ունեցող եւ երկու օր տեւող Մաքսատան մեծ հրդեհէն շատ մը վաճառականներ վնասուած էին:

Մի քանի կարող փաստաբաններ վաճառականներու կողմէ լիազօրուած են ու Առեւտրական պատանի մէջ պիտի պաշտպանեն վնասուածները: հատուցում պահանջելով նաեւ հանգիստի Լնկելութենէն եւ Մաքսատան վարչութենէն:

ՏԱՐԵԿԱՆ ՈՐՔԱՆ ՕԹՅԻ ԱՐԿԱՇՆԵՐ ԿԱՆ

Օթոյի արկածները օրէօր կ'աճեն: 1929ին պատրաստուած վիճակագրութիւններու արդիւնքն է, ԱՆԳԼԻԱ. - 6696 մեռել 170917 վիր. ՊԵՐՍԻԱ. - 468 » 11828 « ԻՏԱԼԻԱ. - 101 » 1234 « ԲՈՐՈՒՄԻԱ. - 205 » 2553 « ԳԱՆԱՍԱ 1170 « — Մ. ՆԱՀԱՆԳ. 33060 » 1200000 «

— Անգլիական կառավարութիւնը զարդեցուցած ըլլալով Մալթայի սահմանադրութիւնը: համայնքներու պալատին մէջ խորհրդակցութիւններ կատարուած է փափաք յայտնուած է որ անիկայ իսկոյն վերահաստատուի:

Մեր յարգելի պաշտօնակից «Ազգայն» թերթի Տէր եւ Տնօրէնի Հայր Պրն. Ռուբին Պալիանէ կը խնդրուի փութացնել 1929 տարուայ Բ. վեց ամսեայ բաժանորդագիրը 165 Սուրբ Դր. ինչպէս նաեւ 50 դր. իր դրամեր Ռուսացական պաշտօնի յայտարարութենէն մնացած:

ՊԱՏԵՐԱԶՄ ՍՈՒՐԻՈՅ ԴԷՄ

Սարախի պատերազմէն վերջ որ տեղ տեղ կը շարունակէ զիւ շատ փոքրիկ ընդհարումներով, Էլիւնանի մայրաքաղաքին մէջ սկսած է պատերազմ, մուկերու զէմ որոնք կը նսեկայացնեն աւելի քաջ թիւ մը քսա բռնաշնչակ Լիբանանի բնակչութիւնը: Ժանտախտի երկու կասկածելի զէպքերու վրայ իրական պատերազմ մը սկսած է Պէյրութի միջնաշտ թաղերու որոնցմէ ամէնօր քնշուող տեսակները կ'ենթարկուին զխաղնութեան: Զարդիկ մէտրոսներու նուէրներ կը տրուին: Թէեւ վտանգ չիկայ սակայն ջարդը կը շարունակուի ու երանի թէ տեւէ մի քանի ամիս ու բնաջնջուէր մուկերու ցեղը:

ՔՕՁԻ ԿԱԶԻ ՊԷՅԻ ՍՊԱՆԻՉՆԵՐԸ ՍԱՀԱԿՃԻՌ ԿՍՏԱՆԱՆ

Քօզի Կազի Պէյի պաշտօնէն հեռացող փոխարեկ մտնանի վրեժէն նոյն Ատեանի կողմէ ստացած են մահազէմ: Նախագահի եւ Բ. Գոմիսիոյ կողմէ վաւերացուելէ վերջ, Մէրճիի հրապարակին վրայ պիտի գործադրուի մահազէմը: Կազիի կողմէ Լալիթի էլ վափի եւ վաճի էլ Դազիի: Իսկ մահազէմի Բիւսա էլ Դազիի տարիքի մասին քննութիւն պիտի կատարուի: Իտալական Հիւպատոսի միջամտութեան վրայ:

ՕՒՍԱՆԱԿՈՅԻՆ ՍՊԱՍԱՐԿԱՅԻՆ

Օղանաւի ամառանոցի սպասարկութիւնը շատ կանոնաւոր կը կատարուի, Օղանաւը Պէյրութ կը հասնի կիրակի կէս օրէ վերջ ժամը 6, Օլին: Կը փոխադրէ ճամբորդներ Իսմաիլիս — Պաղատա եւ Պէյրութ — Մարտէլ օդային կիմերով:

ՆՈՐ ՊԱՇՏՈՆԵՍՆԵՐ

Երեւմտական Նախարարութեան որոշումով յաջող քննութիւն տուող քառասունի մօտ երիտասարդներ պիտի ընդունուին իրեն պաշտօնեայ եւ հաւաքէ:

— Իրազի Նախարար. Խորհուրդի Նախագահ Նուրի Փաշա Սալիմ Պաղատաէն օգնականով Պէյրութ հասած է իր տիկնոջ հետ եւ մի քանի ժամուան հանգիստէ վերջ մեկնած Հայֆա:

ՆՈՐ ԳԻՒՂԱԳՆԱՅՆԵՐ

«Բիէ Լօթի» շրջանաւոր ամսոյս 3 ին Պէյրութ ժամանած են բազմաթիւ գիւղացիներ որոնց մէջ կը գտնուին Եգիպտոսի թագաւորական ընտանիքէն Շէրիֆ Փաշա Սահուտ, Ալեքսանդրիոյ կառավարիչ Մահմուտ Փաշա Սապրի եւ Տիկնոջ:

ԶԱՐՏԱՐԱՐՈՒՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՆ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

Կարգ մը երեւելի Դրամատիկներ Սուրիոյ կառավարութիւնէն արտատոնութիւն ուղարկուած են հիմնիկու համար Զարտարարութեան արտադրութիւնը կարելի դրամադրութիւնով որու մէջ մասը կառավարութիւնը պիտի ապահովէ:

ՈՒՂԻՆԻՅԵՒ ՍԱՐԻՈՅ ՄԷՋ

Սուրիոյ ուղղութեամբ սպասարկութեան կողմէ վարիեր պահանջուած են Համայն, Բուենթիթոյի, Դուլթալի ուղղութեամբ: Եւ Դամասկոսի անապատին ու Բարձրի շրջանին մէջ հորեր բռնալու համար:

ԹՐԲԱԿԱՆ ՄԻՍԱԿԱՆ ԿՈՒՂԱՅ

Մեր առած ստոյգ տեղեկութեանց համաձայն երկու սնունդ թրքական ծխախոտ եկած է իրեն նմոյշ Պէյրութի Թրքական Հիւպատոսին: Մօտ օրէն միջաքանակ ծխախոտ ալ պիտի գայ եւ պիտի ծախուի շատ նպաստաւոր ու աժան դէպքով: Սպասուելով տեղի պիտի ունենայ հրապարտարարի հոգեւոր Կարգի թանկ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Քաւրտ Հրոսակներ Թուրքիոյ Մէջ Թուրքիա կը Բնդոմէ

Պարսկաստանէն քուրդ-հրոսակներ թուրքիա մտնելով կողոպտած են գիւղերը ու կը ջանան ապստամբութեան մղել թուրքիոյ ժողովուրդը: Կառավարութիւնը օգնական եւ զինուորական ոյժեր զրկած է որոնք մեծ կորուստներ պատճառած են հրոսակներուն: Հրոսակներ մը Արարատ լեռան վրայ կը գիմագրէ թրքական ոյժերու:

Անգարայի կառավարութիւնը պաշտօնապէս բողոքած է Պարսկաստանի:

Շոգեկառի մը Կեցած Մարախներէ

Աւստրիոյ Նեօշթատ քաղաքի շոգեկառքը, Վիէնայի մօտ ստիպուեցաւ կանգ առնել գիմին վրայ հաւաքուած մարախներու պատճառաւ որոնք այն շրջանի գետնախնձորի բերքը փճացուցած էին: Կենդանով եւ ուրիշ միջոցներով կարելի եղած է ջնջել մարախները մինչ այդ շոգեկառքը ժամկետով ըսպատած է:

Խարդախ Օղանաւորը

Չէթօղլաւ օղանաւորը Գարի Շէհօրշ Գրէսլաւի մօտ ստիպուելու համար վրայ իջաւ ու յայտարարեց թէ իր պահանջատէրներէն ազատուելու համար Դաւալիք եղած է: Օղանաւը գրաւելով պիտի յանձնուի Չէթօղլաւ կառավարութեան:

Տնտեսական Տագնայի Իմաստ

Միջազգ. Առեւտր. Սննդանի խորհուրդը կառավարութեանց գիմելով պահանջած է ձեռք առնել հարկ եղած միջոցները վերջ տալու համար տիրող տնտեսական համաշխարհային տագնապին, առ այս յանձնարարելով վաւերացնել ժնջելի մէջ ընդունուած գիւնադիտական արթիւր:

Բուս Զարօն միջադէպ

Բամշաքթայի ջուրերու մէջ Բուս եւ Զարօն ջիւղերներու միջեւ անհամաձայնութիւններ կան միշտ, շարաք մը առաջ Բուսական ձկնորսանաւ մը, առանց ազդարարութեան կրակած է Զարօնական նաւու մը վրայ, նաւապետ մը ծանրաւն վիրաւորուած է: Զարօնական զրահաւոր մը զրկուած է տեղւոյն վրայ:

Ամբողջ Գերմանիա կը Տօնէ

Հոնոնի ֆրանս. վերջին գործադէմը Գերմանիոյ զինուորական գիւղացիներուն վրայ ծագած անհանգստութիւնները գրաւ, նոյն փոխանակեցին Գերմանիոյ Բաւարիական տոնն միջազգայնական յանձնաժողովի սնդամները արտասանեցին բարեկամական ճառեր: Երբ վերջին ոյժերը շոգեկառք մտան: գերմաններ անվերջ ծագած անհանգստութիւնները ըրին: Բոլոր գերմանիա կապի տոնական օրեր:

Գործադու Սպանիոյ մէջ

Սպանիոյ մէջ ընդհանուր գործադուլը կը ծաւալի, ներքին գործադուլը ազդարարեց գործաւորներու թէ գործադուլը ապստամբական ձեւ առած ըլլալով, կառավարութիւնը պիտի զիմէ իրաւ միջոցներու:

Նաւային Դաւնագիր եւ Սնգլիա

Լորտերու ժողովին մէջ քննադատութիւններ եղան նաւային դաշնաւագրի մասին որու տրամադրութիւնները կը նկատուին անբաւարար երկրի ապահովութեան համար: Լորտ Բարմար յայտնեց թէ Աշխատաւորական կուսակցութիւնը նոյն պէս մտահոգ է երկրի ապահովութեան մասին:

Գերման Բաղաճականութիւն

Ռայխսթակը 283 ձայնով 121 ձայնեւ եւ 3 ձեռնպահի դէմ պր. Գուրթիոսի մասին կատարուած ազգայնականներու եւ համաշխարհներու անվրստանութեան առաջարկը մարտեց:

Կայծակ Նաւու Վրայ

Հոնոնէն առնուած լուրերու համաձայն Գիւնկ Նաւուն վրայ կայծակ ինկած է, նաւը Լաւրանս Գիտի աւազանի մաքրութեան յատուկ ուժանակներով լեցուն էր: արդիւնքը տնտեսի եղած է 52 նաւաստիներէն 40ը մեռած իսկ մնացածը վիրաւորուած են:

Սակերու Կուրիւն Վերջ Տալու Իմաստ

Բարիդի միջազգային սակարանային միութիւնը որոշեց հանրային կարծիքին կողմ մը ընել սակերու կուրիւն վերջ մը տալու համար եւ փափաք յայտնեց որ երկրագործական բերքերու արտադրութեան եւ բաշխումի խնդիրը քննելու համար տէրութիւնները խորհրդաժողով մը գումարեն:

Ս. Պապի Չայնը Անթելով

Հռոմէն կը տեղեկացուի թէ յառաջիկայ Սեպտեմբերին Վատիկանի մեծ կայարանի բացման հանգիստի առթիւ Ս. Պապը անթելով պիտի խօսի բոլոր աշխարհի:

Ամապերջի Հանդէս

Անդր — Նահրի Նուգարիան Ազգ. Նախարարարանի ամապերջի հանդէսը տեղի կ'ունենայ յառաջիկայ Կիրակի 6 Յուլի 1930 կէս օրէ վերջ ժամը ճիշտ 2 ին:

Կրթաւէր Ծնողքներէ, Ազգայնիկներէ կը խնդրուի իրենց ներկայութիւնը քաղաքի պատկան ազգային մարմիններն ու մատաղ սերունդը:

Թաղական Խորհուրդ
Ա. Կաւապոյի Եկեղեցւոյ

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գիտական դասընթացք մալ բաց-
ուած է երիտասարդներու համար,
իմաստասիրական դասեր կաւանդու-
ին մեր համադրապետին կողմէ եւ
փափաքողները կրնան դիմել «Լիբա-
ժան» Տպարանը:

Այցելութեան ժամ առաւօտեան
ժամը 8 էն մինչեւ կէս օրէ վերջ
ութը 2:

ՅՈՅԺ ԿԱՐԵՒՈՐ

Մեր հին և նոր յարգելի բաժա-
նորդներէն կը խնդրուի փութացը-
նել իր նոյն յեանեալ և նոր հաշիւե-
րը, զմեզ փրկելու համար կարգ մը
գոյնաւորութիւններէ որոնց կարգին
են թղթատարական անհարկի ծախ-
քեր և Գանձումի համար բազմա-
ծախս ուղեւորութիւններ:

ՓՆՏՈՒԵՑԷՔ ԵՒ ԳՈՐԾԱԾԵՑԷՔ

հայկական լաւագոյն եւ առողջապահական

ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄԻԿԱՐԷԹՆԵՐԸ

CIGARETTES MANOUGIAN

ԶԱՆԳԱԿ, ՀԱՅ ԶԱՅՆ, ԱՄԱՆՈՍ, ԼԻԻՔՍ

Հանրաժամօր անուանեցող

Որոնք իրենց առաւելութիւններով կը գերազանցեն տեղական բոլոր սի-
կարէթները, ՄԱՆՈՒԿԵԱՆ, սիկարէթները կը ծախուին Լիբանոնի Գանձումի
էլ Շրպէքի գործարանի մէջ և բոլոր ծխալոյսներու քով: Լիբանոնի և
Սուրիոյ բոլոր կողմերէն կատարուած մեծաքանակ և փոքրաքանակ յանձ-
նորարութեանց համար ճշգրտապէս և խղճամբով գործացում: Օրական 40000
սպառում:

ԴԻՄԵՑԷՔ ԴԻՄԵՑԷՔ ԴԻՄԵՑԷՔ

ՄԱՆՈՒԿԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Փոսթարկ 718 Պէյրուս (Լիբանոն)

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԻԻՔՍ ԿՈՇԿԱԿԱՐԱՏՈՒՆ
ԹՈՐՈՍ ՀԱՃԻ ԳԵՈՐԳԵԱՆ



Կանանց, արանց և փոքրիկներու համար
յոյժ նորաձև և ամէն տեսակ կօշիկներ ապա-
ւորանք կամ պատրաստ,

ՅՈՅԺ Զ ՓԱՒՈՐ ԳՐԱՆԵՐ ԵՒ ԾԵՏԱՊԱՀ ԳՈՐԾ:
Հասցէ Վասի Ապու ձէմիլ Պէյրուս:

ՏՊԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆ

Կը պատրաստուին՝

ԴՊՐՈՇԱԿԱՆ ՊՏՈՑԲՆԵՐ.— Տետրակ, Գիրք (գպրոցական, գրա-
կան ու վրպական),

ՀԱՅԵՐԷՆ ԶՐԱՆՍԵՐԷՆ ԵՒ ԱՐԱՐԵՐԷՆ.— լեզուներով, կտտանձ-
նէ Տպագրական ԿԱՄ Հրատարակչական,
Ամէն տեսակ գործեր երեք լեզուներով,
նաեւ առեւտրական ամէն տեսակ գործեր
ինչպէս նաեւ Հարսենական Հրաւիրագիրներ

Տուփի Գործարան

Կը պատրաստուին՝

Շաքարի, Լօգումի, Շօքոյաի, Կօշիկի,
Դեղարանի, Շապիկի ԱՄԷՆ Տեսակ
տուփեր քաղցր եւ պատկերներ:

Յոյժ դիրամասչելի պայմաններ ԵՒ
Խնամեալ ու հեշա պան գործ:

ԹԵՐԹՈՆ «ԼԻԲԱՆԱՆ»

Գրեց՝ Ս. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Յ Ի Ժ Ա Տ Ա Կ Ն Ե Ր

Ազգին ամբողջութիւնն էր անոր
նպատակը և իր անձին նկատմամբ
զիրտողութիւն ընդդէմ դրա՝ կը պա-
տասխանէր սա, «օր մը չէ օր մը
պիտի մեռնինք էլի»:

Ու եղաւ որ անսպասելիօրէն
թաքսիմ աշխատանքի տան առջև
կասի այս մարդը հեռապառ և հա-
կառակ ամէն խնամքի հրաժեշտ տայ
ամէնուս: Լացին դաշնակցականնե-
րը: Լացին հնչակեանները: Լացաւ
համօրէն ազգը որովհետեւ ամէնուն
հայրը ինկաւ: Իսկ ես լացի ու կու-
լամ որովհետեւ այդ թշուառ ճամբու
մէջ յարատեւող հոգուոյ մեծութեան
հիմը իմ մէջ արժատացնողը Սիմէո-
նը եղաւ:

Ուզող համադրապետի բնոյթ կը կը-
լէր: Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլ-
սոյ պատասխանատու մարմինը եր-

բէք քան մը չխնայեց յարգանքի
կարգադրութեան մէջ և երբ մենք
գիմեցինք եղբայրաբար, տալ մեր ալ
բաժինը, պատասխանեցին թէ չնոյ-
հակալ են սակայն աւելիովը ամէն
ինչ հաշուի առնուած է:

Թաղման օրը մարդ Պօլս գրա-
նուելու էր: Երբ Ս. Երրորդութեան
եկեղեցիէն մեծեկապառ գրուեցաւ
և Ծօրէի մահերքով դէպի թաքսիմ
կը քալէր: Ծովածառաւ բազմութե-
նէն, ժամ մը կեցան թրամուէյ,
ինքնաշարժ և երթեկէն անկարելի
դարձաւ: Բերայի շիտակ ճամբու եր-
կու կողմի շէնք և արարգմաններ
մարդկային գլուխներու ստարան մը
կը պարկէին և արարողութեանց կը
նախադասէր օրհնաւ պատրիարքը իմ
չուրջ ունենալով գրեթէ Պօլսոյ ամ-
բողջ եկեղեցականութիւնը: Ակնունդ

ՊԱՊԻԿԵԱՆ ՀԱՅ. ՕՃԱՌԻ ԳՈՐԾԱՐԱՆ

SAVONNERIE BABIKIAN

Աչքը լոյս մաքրասէրներու: Պէյրուսի մէջ բացուած է Լիբանոնի անդրանիկ
հալկական օճառի գործարանը եւրոպական մեքենաներով և ձէթով:

ԲԻԻ ՆԱՀՐ ԴԱՍԱՆԿՈՍԻ ՇՈԳԵԱՌՔԻ ԿԱՍՈՒՐՁԻՆ ԿԻՑ

ՊԱՊԻԿԵԱՆ ՕՃԱՌԸ ԱՆՄՐՑԵԼԻՕՐԷՆ ՈՒՆԻ

= Մաքրողական ոյժ, — Անխառն ու պատշաճութեամբ Մարսիլիական
ձէթով, — Յոյժ գիւրամտալիզի գիներ, — Տեղական և եւրոպա-
կան բոլոր օճառներէն լաւ, — Արագ փրփրալու և ուշ սպա-
ռելու յատկութիւն, — Հաղուստիկները լաւ մաքրելու
և չմաշեցնելու ոյժ, — Ձեռքերը փափուկ պահելու
հրաւիր, — Տաք և պաղ ջուրով գործածելու
գիւրութիւն

240	կրամնոյ մեծ կտորը	6	Ո. Դ.
120	» փոքր »	3.	» »
Տեղական օճառի օխան		30	» »

Պապիկեան Գործարանի մէջ եւ հայ նպարա լսնառնեալ մօս
Մաքրատէրներ — խնայատեւ, օգտուեցէ՛ք


ՏՕՔԹ. ՄՈՎՍԷՍ ՊԱՊԻԿԵԱՆ

ՀԵՆՏԷՔ ՓՈԴՈՑ — ՀԵԼԷՊ

Հալէպի և Բալաթի Ս. Բոյ մէջ ծանօթ իրեւ բժիշկ և վի-
րաբոյժ: Բ՛զհանուր պատերազմի միջոցին թրք. բանակին մէջ ծո-
ւայած ու մէտայնեալ վարձատրուած: Սը դարձաւ բժիշկական ա-
մենաարդիական միջոցներով տմէն կարգի հիւանդութիւններու վեր-
ջեր խղճամ/տ և արագ դարձաւ:

ՅԱԿՈԲԵԱՆ ԵՂԲԱՐ

ՍՈՍՁՆԱԿԱՐԳ ՀԱՅ ԶՈՒԼԱԳՈՐԾ



Կը ձուլեն ամէն տեսակ կաշուազարդ գործիք-
ներ, կը ծախեն և կը նորոգեն ԲՐԻՄԻՍԻ
ամէն տեսակ օրծիքներ

ՀԵՓԵԼՈՐ ԳԻՆ ԵՒ

ԴՎԵՄԵԼ ԵՇԽԵՏԵՆԻ

ՀԱՍՏԷ ԹԱՐԻԳԷԼ ՀԱՍ ԹԻԻ 96 ՊԷՏՐՈՒԹ

ՕԹԷԼ ՄԷՐՍԻՆ

Պէյրուսի ճիւղ երկաթուղիի կայարանին կից:

Մաքուր անկողին, անքերի պալատիկութիւն և ընթանկան
խնամք, գին խիստ չափաւոր
ձամբորդներ իշէօ օրէլ Մէրսինը — գոհ պիտի մնա՛

ՕԹԷԼ ՍՏԱՆ. Ո

ՅՈՇ ՓՈԴՈՑ ՄԷՍԱԺԸՐԻ ՄԱՐԻԹԻՄԻ ԲՈՎ

Պէյրուսի լաւագոյն պանդոկներէն մէկը. օժտուած տաք և պաղ ջուրի
բազմութեամբ, առատ երկքարական լոյսով, երկրորդ և երրորդ յարկերու վրա-
խիստ օգտուելի տնտեսակներով, չափազանց մաքուր տնկողներով և յարգե-
լի յաճախորդներու հանգիստը ապահովող հիանալի սպասարկութիւններով
ձամբորդներու համար գիւրութիւններ:

Տէր և Տնօրէն ԺԱԴ ԱԳՇՕԹԻ

Զարդարեան: Յ. Դահլիշեան. Վարդ-
գէս և Մուրատ առաջին դժի վրայ
ծողկերուն կը հեռանէին և նաեւ գը-
րուս: Իսկ հոտ էին Բէշեաններ.
Տիրան Բէշեաններ. Արշակ Շմա-
ւոնեաններ Հայկ Պօստարկաններ,
Պօլսահայ ամբողջ մուսուրականու-
թիւնը, և երբ տնցաւ դազաղը Բե-
րայի շիտակ ճամբան և ելաւ թաղ-
սիմի հրապարակը, հոն էր կրնամ ը-
սիլ Պ. յաճախութիւնը իր ամբողջու-
թեամբ և նմանը երբէք չտեսնուած
յարգանքի ցոյցով մը առաջնորդուե-
ցաւ գերեզմանատուն և թաղուե-
ցաւ Սիմէոնը: Ակաղեմական ըսուե-
լու աստիճան արտասանուած դամ-
բանականները զանց պիտի ընենք:
Ահաւասիկ նախ հայը, յետոյ կու-
սակցականը իր եղածին պէս:
ՀՐԱՉ: Ազատամարտի Արտօնա-
ւէրը: միջակ գրիչ մը. և առետրա-
կան մարդ: Դաշնակցական և չանկրի
աքսորի մէջ սպաննուած:
ՄՈՒՐԱՏ: Բան չուրեմ աւելցնե-
լիք. Սիմէոն Զաւարեանի նկատմամ
ըսածներս կրկնելու պարտաւորուած
եմ իմ անմոռանալի երկար ժամա-
նակեայ ընկերոջս համար: Փափաքս
էր տեսնել այս զոյգ երանելիները
իրարու քով պառկած և վրանին մէկ
մէկ յիշատակարան: Սակայն գէպե-
րը Սիմէոնին խնայեցին և զաւոյց վը-
տանգին առջև թափելիք արցունք-
ները մեզ կտակեցին: Իսկ միւսը
թանկագիններու թանկագինը Մու-
րատը: Զաւակեց դառնութեան անտա-
նելի բաժակը և կախաղան բարձրա-
ցաւ կեսարիոյ մէջ: Այն մարդը որ
իր դահլիշներուն ալ վերջին վայր-
հեանին ներելով գնաց. գոցելով կա-
խաղանի բարձունքէն թէ «չեն գի-
տեր ինչ կենն» Ահ Մեծք Մուրադ:
Սիմէոնի բազմաիողմանի հմտու-
թիւնը չուրէր Մուրատը: Բժշկական
վարժարանի ուսանող էան ալ կիսատ
թողուցած էր: Վարած է Սասնոյ
ապստամբութիւնը և ցոյց տուած
թէ գերակշիռ զօրութեան առջև
անձեռնարկութեան ոգին ինչ հրաշք-
(Շար.)